



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.ori@mta.gov.am

26.12.2016թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 35-Ն
ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով
Միխայելովկա համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Միխայելովկա համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը:

Ա վ ա գ ա ն ու ա ն դ ա մ ն ե ՚	կ ո ղ մ	դ ե մ	ծ ե ո ն պ ա հ
1. Դիլբարյան Էդիկ		-	-
2. Դիլբարյան Վլադիմիր		-	-
3. Հակոբյան Աղունիկ		-	-
4. Վարդանյան Արսեն		-	-
5. Մնացականյան Նունե		-	-

Միխայելովկա համայնքի ղեկավար՝





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

26.12.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 36-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Միխայելովկա համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 32-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Միխայելովկա համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա Վ ա գ ա ն ու ա ն դ ա մ ն ե ՚ր՝

1. Դիրբարյան Էդիկ
2. Դիրբարյան Վլադիմիր
3. Հակոբյան Աղունիկ
4. Վարդանյան Արսեն
5. Մնացականյան Նունե

կ ո ղ մ	դ ե մ	ձեռնպահ
<i>Davutyan</i>	-	-
<i>...</i>	-	-
<i>...</i>	-	-
<i>...</i>	-	-
<i>...</i>	-	-

Միխայելովկա համայնքի ղեկավար՝



Լ. Դիրբարյան

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

- | | |
|-----------------------------------|-----------------------|
| 1. Աթայան Շուշիկ Անդրանիկի | քսան հինգ հազար դրամ, |
| 2. Մկրտիչյան Էդվարդ Սուրենի | քսան հինգ հազար դրամ, |
| 3. Մարգարյան Սվետլանա Հարությունի | քսան հինգ հազար դրամ, |
| 4. Աղասարյան Ավագ Արթուրի | քսան հինգ հազար դրամ, |
| 5. Կարամյան Մելանյա Ռաֆիկի | քսան հինգ հազար դրամ, |
| 6. Սամվելյան Ինեսսա Վրոյրի | քսան հինգ հազար դրամ, |
| 7. Բեգլարյան Վաղիմ Մաքսիմի | քսան հինգ հազար դրամ: |
| 8. Մարգարյան Նարինե Խաչատուրի | քսան հինգ հազար դրամ: |
| 9. Աթայան Մարգարիտա Ավետիսի | քսան հինգ հազար դրամ: |
| 10. Դումիկյան Գայանե Վլադիմիրի | քսան հինգ հազար դրամ: |
| 11. Դիլբարյան Կատյա Աշոտի | քսան հինգ հազար դրամ: |
| 12. Ավագյան Ստելլա Գրիգորի | քսան վեց հազար դրամ: |

ԸՆԴԱՄԵՆԸ՝ երեք հարյուր մեկ հազար դրամ:

ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ
(անուն, ազգանուն)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016թ.դեկտեմբերի 26-ի թիվ 35-ն որոշմամբ

ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	5
2.2. Համայնքի սոցիալ փնտեսական իրավիճակը	7
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	8
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	9
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	10
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	13
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	14
3.1. Համայնքի զարգացման փեսլական	14
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	16
4. ՀԶԾ ֆինանսավորում	17
5. ՀԶԾ մոնիթորինգ	17

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Միխայելովկա համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի ռազմավարական պլանը մշակվել է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական կարգով գործող հանձնաժողովի, համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից, բնակիչների, ավագանու անդամների, և այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ: Քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լուծումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են

- Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը
- Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը
- Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ
- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները և բարձրացնել սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը
- Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը
- Նոր աշխատատեղերի ստեղծում

Համայնքում առկա հիմնախնդիրները

- Բնակչության սոցիալապես անապահով վիճակ /60%-70%/
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում
- Խմելու ջրի ներքին ցանցի մաշվածության / ջրագծի հիմնանորոգում/
- Միջնակարգ դպրոցի անմխիթար վիճակ
- Առկա գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների մաշվածություն
- Աշխատատեղերի բացակայություն
- Կաթի վերամշակման արտադրամասի կառուցում և հեռագնա արտոններում խմոցների տեղադրում
- Արտագաղթ

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Միխայելովկա համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի հյուսիսային մասում, ծովի մակերևույթից 1520մ բարձրության վրա: Համայնքի տարածքով է հոսում է Տաշիր գետը: Սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը, Մեծավան, Նորաշեն, Ձորամուր, Պետրովկա և Տաշիր համայնքներին: Համայնքը հիմնադրվել է 1847 թվականին՝ ռուսական կազակների և մոլդկանների կողմից, վարչական տարածքը կազմում է 2094,36 հա: Սկզբնական շրջանում բնակվել են հայերը, մոլդկանները և ադրբեջանցիները: 1988 թ-ի հայ-համազգային շարժման ժամանակ համայնքը 98 % վերջնականապես բնակեցվել է փախստական հայերով: Համայնքի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում: Ձմեռը ցուրտ է, կայուն և երկարատև ձյան ծածկույթն սկսվում է նոյեմբերի վերջից և վերջանում ապրիլի 2-րդ տասնօրյակում: Գարունը երկարատև է ու ցուրտ: Ցրտահարությունները միջին տվյալներով վերջանում են մայիսի 2-րդ կեսից: Ամառը կարճ է, զով ու չոր: Աշունը սառն է, առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած ու տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխական է: Աշնանային ցրտահարություններն սկսվում են սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին: Հաճախ են լինում երաշտի տարիներ, որից տուժում են գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիները: Գյուղացիներն զբաղվում էին անասնաբուծությամբ, դաշտավարությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքն ունի միջնակարգ դպրոց, բուժ- ամբուլատորիա, մշակույթի տուն:

Միխայելովկա համայնքի առկա բնակչությունը ըստ տարիքային խմբերի և սեռի

		Ընդամենը	Այդ թվում, կանայք
1.	Մինչև 1 տարեկան	10	5
2.	1-2 տարեկան	23	12
3.	3-4 տարեկան	16	8
4.	5-6 տարեկան	23	8
5.	7-10 տարեկան	32	15
6.	11-14 տարեկան	41	18
7.	15-17 տարեկան	41	23
8.	18-22 տարեկան	71	36
9.	23-45 տարեկան	309	151
10.	46-62 տարեկան	203	101
11.	63 և ավելի տարեկան	98	61

Ընդամենը	867	438
-----------------	-----	-----

Բնակչության սոցիալական կազմ հետևյալն է՝

Բնակչության սոցիալական կազմ	
Թոշակառուներ	114
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	6
Հաշմանդամներ	37
Ձուված ազատամարտիկների ընտանիքներ	1
Աշխատանք ունեցողներ	64
Ընտանիքների (ծխերի) թիվը	218

Համայնքի հողատարածքը

	ՀՀ Լոռու մարզի Միխայելովկա համայնքի հիմնական հողային ռեսուրսները	հա
1.	Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը որից՝	2094.6
2.	Բնակավայրի հողեր	107.28
3.	Գյուղատնտեսական նշանակության հողեր	1820.45
4.	Անտառային հողեր	92.37
5.	Արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական հշանակության հողեր	36.75
6.	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	8.50
7.	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	7.29
8.	Ջրային հողեր	21.72

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 21825,0 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 12265,0մլն դրամ (56,2 %),
- Ստորև բերված են համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները՝

Ձեռնարկություններ	Քանակը
Կոոպերատիվ	1
Կրպակ	1
Ասֆալտ- բետոնի գործարան	1

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
Կարտոֆիլ	31.8հա	4770g
բանջարեղեն	5.915հա	60.6g
ցորեն	390հա	5850g

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	714
Այդ թվում կովեր	390
Մանր եղջերավոր անասուններ	182
Այդ թվում մայրեր	141
խոզեր	82
Այդ թվում մայրեր	16
թռչուններ	1375
Այդ թվում հավեր	1178
մեղվաբուծության խմբեր	90

Արտադրված գյուղատնտեսական արտադրանքը հիմնականում սպառվում է տեղում, կամ ՀՀ այլ բնակավայրերում:

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 93 աշակերտ: Աշխատողների թիվը 31 , որից մանկավարժներ՝ 22, որոնցից՝ 15-ը համայնքի բնակիչներից, մնացածը այլ բնակավայրերից: Մանկավարժներից 96% ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:
- Համայնքում գործում է մեկ «Մանկիկ» սոցիալական կենտրոն, հաճախող երեխաների թիվը՝

20: Աշխատողների թիվը՝ 1:

- Համայնքում կա բուժկետ, որը գործում է հնգօրյա աշխատաժամանակով:

Աշխատակազմը հետևյալն է՝ 1 բուժքույր, որը ունի միջնակարգ մասնագիտական կրթություն:

Բուժկետը կցված է Տաշիր բժշկական կենտրոնին: Ամիսը մեկ անգամ Տաշիր բժշկական կենտրոնից համայնք են գալիս բժիշկներ: Բուժկետը համագործակցում է «Վոռլդ Վիժն» կազմակերպության հետ:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 55 ընտանիքներ:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

- ԳԾԻԳ-ի աջակցությամբ համայնքում իրականացնում է գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր:

Ծրագրի նպատակն է ապահովել արդյունավետ և կայուն կառավարվող արտադարյալների/կերարտադրության վրա հիմնված անասնապահական-արտադրական համակարգի ներդրումը, որը կապահովի համայնքում արտադարյալների գերարածեցման կասեցումը, արտադարյալների ավելի արդյունավետ օգտագործումը, կերարտադրության և կենդանիների կերակրման համակարգերի բարելավումը, անասնապահական արտադրության արդյունավետությունն ու ստացվող եկամտի բարձրացումը: Ծրագրով նախատեսվում է նաև համայնքում ներդնել կաթի վերամշակման արտադրամաս:

ԳԾԻԳ-ի աջակցությամբ համայնքում ստեղծվել է կոոպերատիվ, տրամադրվել են գյուղատնտեսական մեխանիզացիաներ: Ծրագրով նախատեսվում է նաև ձեռք բերել այլ գյուղատնտեսական մեխանիզացիաներ: Առաջիկա տարիներին նախատեսված է իրականացնել մոնիտորինգներ:

- Վոռլդ Վիժն միջազգային կազմակերպության համագործակցության շրջանակներում իրականացվում է հովանավորչական և կրթական ծրագրեր, ինչպես նաև Ամանորյա, երեխաների պաշտպանության օրվա միջոցառումներ, տիկնիկային բեմականացման ցուցադրություններ, երեխաների հանգստի կազմակերպում ճամբարներում:

- «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» բարեսիրական հասարակական կազմակերպության համագործակցության շրջանակներում իրականացվում է հովանավորչություն համայնքում գործող Մանկիկ սոցիալական կենտրոնին, ինչպես նաև երեխաների պաշտպանության օրվա միջոցառումներ, երեխաների հանգստի կազմակերպում ճամբարներում:

ԳԾԻԳ-ի կողմից ստեղծված կոոպերատիվը կմեծացնի համայնքաբնակների համախմբվածությունը և կխթանի գյուղատնտեսության զարգացմանը:

Միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումները խթանում են համայնքի երեխաների կրթության զարգացմանը: Մեծանում է երեխաների ակտիվությունը, ճանաչողությունը և ապագայում նրանց մասնակցությունը համայնքային խնդիրների լուծմանը:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխապեստումները

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	2016	2017	2018	2019	2020	2021
Ա.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	20060.9	21825.0	22541.5	23838.0	25058.0	26248.0
1.	Հողի հարկ	77011.0	8679.5	8850.5	9050.0	9200.0	9320.0
2.	Գույքային հարկեր այլ գույքից	788.0	836.0	893.0	940.0	960.0	990.0
3.	Վարձավճար	2700.0	2700.0	2750.0	2800.0	2850.0	2890.0
4.	Տեղ. փոտրք	48.0	48.0	48.0	48.0	48.0	48.0
5.	Ընդամենը սեփ. եկամուտներ	10499	12263.0	12541.5	12838.0	13058.0	13248.0
6.	Պաշտոնական դրամաշնորհներ	9561.5	9561.5	10000.0	11000.0	12000.0	13000.0
Բ.	ԾԱԽՍԵՐ	20060.9	21825.0	23208.5	23838	25058.0	26248.0
1.	Կառավ. ապարատ.ծախսեր	11820.9	13205.0	13958.5	14078.0	14778.0	15198.0
2.	Տրանսպորտ	800.0	1200.0	1400.0	1500.0	1600.0	1800.0
3.	Բնակ. շինություն	2800.0	2800.0	3000.0	3100.0	3200.0	3500.0
4.	Հանգիստ, մշակույթ, կրոն	1140.0	1940.0	2000.0	2150.0	2300.0	2400.0
5.	Կրթություն	550.0	430.0	450.0	460.0	480.0	500.0
6.	Սոցիալական պաշտպան.	600.0	1150.0	1200.0	1250.0	1300.0	1350.0
7.	Այլ խմբեր /պահուստային/	2350.0	1100.0	1200.0	1300.0	1400.0	1.500

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Միխայելովկա համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 70%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման հիմնական խոչընդոտող գործոններն են ֆինանսի բացակայությունը, իրացման շուկայում արտադրանքի անմրցունակ լինելը, իրացման դժվարությունները, գիտելիքների պակասը:

2) Համայնքի գույքի կառավարումը իրականացնելու խնդրի խոչընդոտող գործարար միջավայրի և ձեռնարկատիրության ցածր մակարդակը, ֆինանսի պակասը, բնակչության մոտ գիտելիքների պակասը:

3) Նախադարձական կրթության կազմակերպման խոչընդոտներից են՝ շենքի ձեռք բերման խնդիրը՝ համապատասխան ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով, ինչպես նաև համապատասխան գույքի ձեռք բերման ֆինանսական խնդիրները:

4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչընդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի բացակայությունը և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

5) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը բարելավելու համար խոչընդոտ է աշխատատեղերի պակասը, սեզոնային զբաղվածության արտադրամասերի բացակայությունը, սոցիալական օգնության ֆինանսի սակավությունը, լրացուցիչ եկամուտների ստացման բացակայությունը:

6) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչընդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

7) Համայնքում բնակարանային շինարարության խթանման խոչընդոտ է համարվում ֆինանսական միջոցների բացակայությունը:

8) Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը, խնդրի խոչընդոտներից են աղբամանների, աղբահարթակների, աղբավայրի և աղբափոր մեքենայի բացակայությունը, ֆինանսական միջոցների բացակայությունը:

9) Պետության պաշտպանության իրականացման աջակցումը, այս խնդրի լուծման համար կարևոր խոչնդոտ է հայրենասիրական, պետական մտածողության պակասը, գյուղաբնակների ամենօրյա զբաղվածությունը անասնապահության մեջ, փրանսպորտային միջոցների ոչ սարքին վիճակը:

10) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը, խնդրի խոչնդոտներից են շենքերի և շինությունների ոչսեյսմակայուն լինելը, պարզագույն թաքստոցների և քաղաքացիների անահատական պաշտպանության միջոցների բացակայությունը, ազդանշանային սարքերի բացակայությունը:

11) Գյուղատնտեսության զարգացման խթանումը, -կարեոր խոչնդոտ է գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայությունը, հեռագնա արուրներն երում խմոցների բացակայությունը:

12) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչնդոտ է գիտակցական մակարդակի ոչ բարձր վիճակը:

13) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում- այս խնդրի լուծման դժվարությունները կապված են սոցիալական վատ վիճակի և աշխատատեղերի բացակայության հետ:

14) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանման խոչնդոտներից են բնակչության սոցիալական վիճակը, աշխատատեղերի բացակայությունը, բազմանդամ ընտանիքների հանդեպ հոգածության ցածր մակարդակը, բնակչության մոտ կա մտահոգություն երեխաներին բարեկեցիկ կյանք ապահովելու հարցում:

15) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մարչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը- այս խնդրի իրականացման խոչնդոտ է մասնագետների և սարքավորումների պակասը, սոցիալական խավերի ֆինանսական ցածր հնարավորությունները, առողջության պահպանման համալիր ծրագրի բացակայությունը:

16) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանման դժվարությունները կապված են սոցիալական վիճակի և գիտակցական մակարդակի հետ:

17) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը, կապված է սոցիալական վատ վիճակի և գիտելիքների անհրաժեշտ պաշարի բացակայության հետ :

18) Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման

նպատակով- այս խնդրի լուծման դժվարությունները կապված են իրազեկման, հայրենասիրական ոգու պրոպագանդման, արտերկրներում բնակվող մեր հայրենակիցների հետ մշտական կապի բացակայության, նրանց համայնքային կյանքին ծանոթացնելու և մասնակից դարձնելու խնդրի հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու,

գ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

դ/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

ե/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

զ/ գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ ջուրը հավասարաչափ չի բաշխված, ուստի բնակչության մի մասը հաճախ զրկվում են

ջրից,

գ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	Համայնքի թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Գյուղի աշխարհագրական դիրքը • Գազաֆիկացված է մոտ 90%-ով • Շուրջօրյա ջրամատակարարում • Հակակարկրային կայանների առկայությունը • Համայնքային կայքի առկայությունը • Հասանելի է բջջային կապի 3 օպերատորները • Ասֆալտ-բետոնի գործարանի առկայությունը • Գործող գյուղատնտեսական կոոպերատիվ • Հեռագնա արտոնների առկայությունը • Բանիմաց աշխատուժի առկայություն • Միջնակարգ դպրոցի առկայություն. • Բուժ-ամբուլատորիայի առկայություն. • Հեռահաղորդակցության առկայություն • Ողղակի ընտրությամբ համայնքի ղեկավար և ավագանի ընտրելու հնարավորություն 	<ul style="list-style-type: none"> • Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ • Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ • Միջնակարգ դպրոցի վթարային վիճակ • Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ • Ֆինանսական ռեսուրսների բացակայություն • Ծնելիության նվազում • Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ • Թերզբաղվածության բարձր մակարդակ • Աշխատատեղերի պակաս • Երիտասարդության ժամանցային վայրերի բացակայություն • Խ.Ե անասունների համար հեռագնա արտոններում խմոցների բացակայություն • Գյուղատնտեսական արտադրանքի ստացման բարձր ինքնարժեք և իրացման դժվարություններ • Աղբահանության բացակայություն • Կենտրոնացված կոյուղու բացակայություն • Գլխավոր հատակագծի բացակայություն • Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի բացակայություն
Հնարավորություններ	Սպառնալիքներ
<ul style="list-style-type: none"> • Խմելու ջրի պաշարի առկայություն • Պեղական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն • Բերրի հողերի առկայություն • Ասֆալտ-բետոնի գործարանի առկայություն 	<ul style="list-style-type: none"> • Տարերային աղբյուրների վրանգ • Գյուղ. մթերքների գների նվազում • Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն • Սպառման շուկաների դժվար հասանելիություն • Խիստ կլիմա /ցրտահարություն/ • Արտագաղթ. • Հիվանդությունների առաջացման վրանգ • Վթարային շենքերի առկայություն • Բնակչության աճի ցածր տեմպ

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

Միխայելովկա համայնքում գալիք տարիներին՝ ՀՋԾ իրականացման արդյունքում նախատեսվում է

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության « Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ»-ի կողմից գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր իրականացում:

Ծրագրի նպատակն է ապահովել արդյունավետ և կայուն կառավարվող արտադարյալների/ կերարտադրության վրա հիմնված անասնապահական-արտադրական համակարգի ներդրումը, որը կապահովի համայնքում արտադարյալների գերարածեցման կասեցումը, արտադարյալների ավելի արդյունավետ օգտագործումը, կերարտադրության և կենդանիների կերակրման համակարգերի բարելավումը, անասնապահական արտադրության արդյունավետությունն ու ստացվող եկամտի բարձրացումը:

Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվում է զարկ տալ կոոպերատիվային շարժմանը, մեքենատրակտորային կենտրոնացված կայանի ստեղծում, ժամանակակից բարձր արտադրողական տեխնիկայի ձեռք բերում , մասնավորապես վարի, հակավորման և խափհնձի համար տրակտոր և այլ գյուղմեքենաներ և գործիքներ: Ծրագրի նպատակն է՝ համայնքում բարձրացնել անասնապահության արդյունավետությունը (կաթնատվություն, մսատվություն), ավելացնել մսուրային շրջանի համար կուտակվող անասնակերի քանակը, նպաստել գյուղամերձ և հեռագնա դեգրադացված արտոնների բարելավմանը, արդյունավետ կառավարել արտոնները, ավելացնել համայնքային բյուջեի մուտքերը գանձվող արտադրարժեքներից, ավելացնել գյուղական տնտեսությունների եկամուտները ստացված անասնապահական արտադրանքից: Ինչպես նաև համայնքային ենթակառուցվածքների (արտոնների ջրարբիացման համակարգ, արտոնների ճանապարհներ, փարախ, հովվի համար կացարան) կառուցում/բարելավում, հողերի մշակում՝ մսուրային շրջանի համար կերային բազայի ավելացման նպատակով: Նախատեսվում է կաթի վերամշակման արտադրամասի կառուցում:

2. Համանքի ճանապարհների մասով նախատեսվում է փողոցների ասֆալտապատում, ինչպես նաև ջրահեռացման առուների վերականգնում և մաքրում:
3. Ջրագծի հիմնանորոգում, նախատեսվում է նոր խողովակաշար անցկացնել և խողովակները անցկացնել:
4. Միջնակարգ դպրոցի հիմնանորոգում և վթարային մասնաշենքի վերականգնում:
5. Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային գույքը վարձակալությամբ տրամադելու աշխատանքներ, մասնավորապես համայնքային հողերի վարձականությամբ տրամադելը: Նախատեսվում է նաև համայնքային սեփականության հողամասերի օտարում:
6. Համանքի բնակավարի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման մասով նախատեսվում է կանաչապատ տարածքների ավելացում՝ ծառատունկ, շենքերի և շինությունների վերանորոգման և արդիականացման աշխատանքներ, փողոցների մաքրման աշխատանքներ:
7. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման բնագավառում նախատեսվում է սպորտային միջոցառումների անցկացում:
8. Նախադպրոցական դաստիարակության բնագավառում նախատեսվում է՝ ցուցաբերել աջակցություն գործող Մանկիկ սոցիալական կենտրոնին, հաճախող երեխաների թվի ավելացում և պայմանների բարելավում:
9. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում նախատեսվում է դասընթացների կազմակերպում, բնակչությանն իրազեկման ազդանշանային սարքավորումների տեղադրում, պարզագույն թաքստոցների կառուցում:
10. Պետական պաշտպանության աջակցման բնագավառում նախատեսվում է զինապարտների պարբերական հաշվառում և զինկոմիսարիատների հետ փոխհամագործակցություն:
11. Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում նախատեսվում է սոցիալական նպաստների տրամադրում, ֆինանսական օգնության տրամադրում փարոս համակարգում չընդգրկված, սակայն սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքներին: Նախատեսվում է նաև բարեգործական կազմակերպությունների միջոցով որոշակի օժանդակություն /հագուստի, սննդի տեսքով և այլն/:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
2. Համայնքի գույքը կառավարել:
3. Նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
5. Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
6. Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
7. Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կազմակերպել նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը,
8. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը և համայնքային ճանապարհների պահպանումը կազմակերպել:
9. Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
10. Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
11. Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
12. Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
13. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
14. Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
15. Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
16. Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
17. Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:

18. Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հասարակությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

4. ՀԶԾ ֆինանսավորում

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

1.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ-ԳՅՈՒՂ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԵՌՔ ԲԵՐՈՒՄ -իրականացվում է ԳԾԻԳ-ի և համայնքի կողմից 5%ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:

2.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ-ԱՐՈՏՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ - իրականացվում է ԳԾԻԳ-ի և համայնքի կողմից 5%ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:

3.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ-ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ - իրականացվում է ԳԾԻԳ-ի և համայնքի կողմից 5% ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:

4. ԶՐԱԳԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ-- իրականացվում է Հայքրմուղկոյուղի ՓԲԸ-ի և համայնքի կողմից 10% ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:

5. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ և ՎԹԱՐԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ- իրականացվում է *դռնոր կազմակերպությունների միջոցներով:*

6. ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱԴԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ - իրականացվում է ՀՀ պետական բյուջեի և համայնքի բյուջեի միջոցներով:

5. ՀՀԾ մոնիթորինգ

ՀՀԾ մոնիթորինգի ծրագիրը, մոնիթորինգի ենթարկվող ցուցանիշները, ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, տեղեկատվության աղբյուրներն ամփոփել համաձայն ՀՀԾ հավելված 3-ում բերված ՀՀԾ մոնիթորինգի անձնագրի:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 1

**« ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »-
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսության զարգացման խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների եկամուտների աճ%-ով	0	10	20	30	40	50	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում գյուղատնտեսության բնագավառում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Գյուղատնտեսության բնագավառում շահագրգիռ տնտեսությունների աճ%-ներով	0	10	20	30	40	50
	2. Բարձր արտադրողական և ժամանակակից գյուղ. տեխնիկա ունենալը						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Բերքի անկորուստ հավաքման աճ%-ով	0	20	30	40	45	50	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Դարձնաճանաչման կազմակերպում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Ֆինանսական միջոցների ձեռք բերում 2.2 Գյուղատեխնիկայի ձեռք բերում						
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝ 28,0 մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. ֆինանսական միջոցներ տրամադրող դրնոր կազմակերպության առկայություն 2. Համայնքում կոոպերատիվի առկայություն 3. Մշակվող վարելահողերի առկայություն 4. Բնական և ցանուվի խտրհարքների առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դրնոր կազմակերպության կողմից չնախատեսված իրավիճակ						

Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է կոոպերատիվային շարժման դերի բարձրացում, ժամանակակից բարձր արտադրողական գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում, որի շնորհիվ բերքի կորոստը կկրճատվի և բնակչության եկամուտները կավելանան 20% և ավելի::

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 2

« ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »- ԱՐՈՏՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԵՎ ՀԵՌԱԳՆԱ ԱՐՈՏՆԵՐՈՒՄ ԽՄՈՑՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսության զարգացման խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Հավելյալ եկամտի աճ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների եկամուտների աճ %-ով	0	10	20	30	40	50	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Խմոցների տեղադրում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1	1	1	1	1
	2. Արոտների բարելավում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Աճ %-ով	0	100	120	130	140	150	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Նախագծի պատվիրում 1.2 Դասընթացների անցկացում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						

	<p>2.1.Ֆինանսական միջոցների ձեռք բերում:</p> <p>2.2.Արտոններ տանող ճանապահների բարեկարգում</p> <p>2.3 Արտոններում մակաբեղերի կառուցում</p> <p>2.4 Արտոններում ծածկոցների կառուցում</p> <p>2.5 Հովվի համար կացարանի կառուցում</p> <p>2.6 Հեռագնա արտոններում խմոցների տեղադրում</p>
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 4.5մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 17.5մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝22մլն դրամ.</p>
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	<p>1.Ֆինանս տրամադրող դոնոր կազմակերպության առկայություն</p> <p>2.Արտոնների համար նախատեսված անհամեմատ մեծ հողատարածքի առկայություն</p> <p>3.Հեռագնա արտոնների առկայություն</p>
Ծրագրի հիմնական ռիսկերը	<p>1.Բնակչության գիտակցական մոտեցում</p> <p>2.Չնախատեսված դեպքեր դոնոր կազմակերպության հետ կապված</p>
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Նախատեսվում է կոոպերատիվային շարժման դերի բարձրացում: Արտոնների ճանապարհների բարելավում, արտոնարեղերում կացարանների և մակաբեղերի կառուցում: Արտոնավայրերի ավելի արդյունավետ օգտագործում, անասնապահական արտադրության արդյունավետությունն ու ստացվող եկամտի բարձրացումը: Անասունների կաթնատվության և մսատվության բարձրացումը:</p>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 3

**« ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »-
ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Հավելյալ եկամտի աճ						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	100	115	125	140	150

Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Կաթի վերամշակման արտադրամաս						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1	1	1	1	1
2. Կաթնամթերքի արտադրություն	Ցուցանիշներ Աճ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	100	120	130	140	150
	Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Տրամադրել շինություն, այն համապատասխանեցնել պահանջներին:</p> <p>1.2. Պատվիրել նախագիծ</p> <p>1.3. Կատարել պետական գրանցում:</p> <p>1.4. Կատարել վերանորոգման աշխատանքներ:</p> <p>1.5. Ձեռք բերել համապատասխան սարքավորումներ:</p> <p>1.6. Կաթի անալիզատորի և պաստերիզատորի տեղադրում:</p> <p>1.7. Վարպետ պանրագործների և մյուս աշխատակիցների վերապատրաստում:</p> <p>1.8. Սկսել կաթի հավաքումը:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Սկսել կաթի վերամշակումը և կաթնամթերքի արտադրությունը:</p>					
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 5մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 21մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 26մլն դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, տրանսպորտ, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Միխայելովկա և հարևան համայնքների բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2018թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացումից հետո համայնքի 10-15 բնակիչներ կապահովվեն աշխատանքով, գործարար միջավայրը կբարելավվի և համայնքաբնակները կունենան եկամտի հավելյալ աճ:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 4

« ԶՐԱԳԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միխայելովկա համայնքում կազմակերպել կոմունալ տնտեսության աշխատանքները:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով ապահովում						
	Ցուցանիշներ աճ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	0	100	110	120	130	150	

Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված խմելու ջրի ջրագիծ և կանոնակարգված ջրի բաշխում:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3	6	7	7	7
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Նախագծի պատվիրում:</p> <p>1.2 Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:</p> <p>1.3 Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:</p> <p>1.4 Երկրորդ ջրագծի խողովակաշարն անցկացնել՝ միացնելով գործող ջրագծի ներքին ցանցին:</p> <p>1.5 Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդիոկենտրոնի օգնությամբ:</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 5 մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 65 մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 70 մլն դրամ:</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Միխայելովկա համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ. - Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում, բնակչության 15%-ը ջուր չունեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով: Ծրագրի իրականացմամբ համայնքում առկա հիվանդությունների վրանգը կվերանսա, կոմունալ տնտեսությունը կզարգանա:</p>						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 5

« ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԵՎ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նոր և ժամանակակից պահանջներին ու շինարարական նորմերին համապատասխան դպրոց ունենալը						
Ծրագրի անմիջական նպատակ	Աշակերտների թվի ավելացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021

	Աշակերտների թվի ավելացում	93	95	99	104	110	115
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Շինարարության ընթացքում ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Ժամանակավոր աշխատատեղեր	0	20	20	20	20	20
	2. Դպրոցական ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ուսումնական գործընթացի արդյունավետության աճ%-ով	70	80	90	100	110	120	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1.Ֆինանսական միջոցների ձեռք բերում:</p> <p>1.2 Նախագծի պատվիրում:</p> <p>1.3 Շինարարության մրցույթի հայտարարում:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1Սկսել վերանորոգման աշխատանքները:</p> <p>2.3 Առաջին մասնաշենքի պատերի և առաստաղների հարդարման աշխատանքներ, պատերի երեսպատում հախճասալերով և խեցեսալե հատակների կառուցում:</p> <p>2.4 Երկրորդ մասնաշենքի համար պատերի ուժեղացման աշխատանքներ, փանիքի տեղադրում, միջնորմերի, պատերի և հատակների կառուցման աշխատանքներ:</p> <p>2.5 Պատուհանների տեղադրման աշխատանքներ:</p> <p>2.6 Ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության համակարգի կառուցման աշխատանքներ:</p> <p>2.7 Պատերի և առաստաղների հարդարման աշխատանքներ, պատերի երեսպատում հախճասալերով և խեցեսալե հատակների կառուցում:</p> <p>2.8 Երկրորդ մասնաշենքի համար թեքահարթակի կառուցում:</p> <p>2.9 Ճաշարանի, սպորտ դահլիճի, մշակույթի դահլիճի հանդերձարանի, սան - հանգույցի կառուցում:</p>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 12.0մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 228.0մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 240.0մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Դրամական միջոցներ 2.Աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Միխայելովկա և հարևան համայնքների աշակերտները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ						

Ծրագրի համառոտ նկարագրություն	Նոր և ժամանակակից պահանջներին համապատասխան դպրոց ունենալով դպրոցական ուսումնական գործընթացը կկազմակերպվի ավելի արդյունավետ, կունենանք բարեկարգ դպրոց, աշակերտների թվի ավելացում, մրցունակ կրթական համակարգ:
-------------------------------	---

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 6

« ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքի պահպանություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Բարեկարգ ճանապարհներ և վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Բարեկարգ ճանապարհի ավելացում քառ. մետր	0	4000	4000	4000	4000	4000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	Վերանորոգված ջրհեռացման առուների ավելացում գմ	0	1000	1000	0	0	0
Ծրագրի բյուջեն	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 ֆինանսական միջոցների հայթայթում 1.2 Նախագծի պատվիրում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 անհրաժեշտ նյութերի ձեռք բերում 2.2 ճանապարհների բարեկարգում						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ	Ընթացիկ ծախսեր՝ 14.0մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 126.0մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 140.0մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ	1. մեխանիզացիա 2. աշխատուժ						

<i>ռեսուրսներ</i>	
<i>Ծրագրի հիմնական ռիսկերը</i>	<i>Ֆինանսներ, անձրևներ , սելավներ</i>
<i>Ծրագրի հիմնական շահառուները</i>	<i>Համայնքի բնակչություն , համայնք</i>
<i>Ծրագրի սկիզբ և ավարտ</i>	<i>2017թ- 2021թ</i>
<i>Ծրագրի համառոտ նկարագրություն</i>	<i>Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում, կահավորված չեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքում տրանսպորտային միջոցները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ տնտեսական վիճակը կբարելավվի:</i>